դքն, և յափշտակեալ 'ի ձեռաց Գրիգորի զԱւետարանն հարին զդեռնի, և աղմկեալ ընդ իրեարս կաքէին և աղաղակէին, և եղեւ շփոթ և խռովութիւն մեծ, և խանդաբեցաւ հանդէսն 'ի տրտմութիւն բազմաթիւ ուխտաւորաց. և մեկնեալ անտի գնացին 'ի վանս Ս. Յակոբայ։ Եւ զկնի աւուրց ամբաստան եղեն միաբանք Հայոց առ դատաւորն զՓոխանորդէն և զմիաբանութենէ Յունաց, որոց առիթ լեալ էր այնպիսի անպատեհ խռովութեան։ Կոչեաց դատաւորն զդլխաւորս երկուց ազգաց. Հայք պատմեցին զոր միանգամ արարեալ էին Յոյնք 'ի տաճարի անդ, և խափանեալ զհանդէսն։ Եհարց դատաւորն ցփոխանորդն Յունաց, թէ որո՞վ համարձակութեամբ արարիք զայն. ետ պատասխանի և ասէ՝ այո՛, արարեալ եմք զայն ամենայն, որպէս պատմեցին Հայք, զի չէր նոցա սովորութիւն ընթեռնուլ զԱւետարան 'ի տեղւոջ յայնմիկ։ Առ այս ետուն պատասխանի Հայք, թէ ոչ է այս նոր ինչ, այլ մին 'ի վաղեմի սովորութեանց մերոց, զոր գիտեն ամենայն այլազգիք քաղաքիս, և դռնապանք տաճարին, որք տեսանեն եւ գիտեն զսովորութիւնս Հայոց զորս կատարեն 'ի շրջանի տարւոյն։ Իսկ դատաւորն առաքեաց զնոսա հանդերձ այլազգօք 'ի Ս. Յարութիւն քննել անդ զեղեալսն։ Եւ նոցա գնացեալ կոչեցին զդռնապանսն և զայլս յերեւելեաց՝ որոց տեղեակ էին սովորութեանց քրիստոնէից. ժողովեցան անդ և միաբանք երից ազգաց։ Հարցին ցայլազգիսն՝ և նոքա ետուն պատասխանի, Հայք 'ի նմին աւուր կատարեն զԹափօրն և ընթեռնուն զԱւետարանն 'ի դուռն Գերեզմանին Քրիստոսի, և զայլ պաշտամունս, ըստ վաղեմի սովորութեան իւրեանց առանց ընդդիմանալոյ ումեք, եւ նոցա դարձեալ առ դատաւորն՝ պատմեցին զկրսն. և նա պատուիրեաց փոխանորդին եւ միաբանացն Յունաց՝ չհակառակիլ Հայոց սակս պաշտամանց նոցին. 'ի ԺԱ Ապրիլ ամսոյ՝ ՌՄԳ (1683)։

Եւ իբրեւ ոչ կարացին վճարել զդատս իւրեանց՝ Պատրիարքն Յունաց և Մարտիրոս վարդապետ, գնացին երկոքեան եւս յԱդրիանուպոլիս յատեան Եպարքոսին, եւ անդ արդարացուցեալ Յոյն Պատրիարքին զդատաստան իւր, զօրացաւ 'ի վերայ Մարտիրոսի և կամէր վրէժս առ-